ԱՆՁՐԵՒԱՅԻՆ ՕՐ

ԼՕՆԳՖԵԼԼՕ-ԻՑ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

(Longfellow. The rainy day).

Օրը ցուրտ է, մըռայլ, տըխուր և մըթին.
Անձրև է թափւում, քամին շառաչում-շառաչում.
Ծառերը կըպչում են փըլւող պատերին,
Եւ հողմըն աւերը է ետիցը թողնում,
Եւ օրը մըռայլ և մըթին։

—

Կեանքըս ցուրտ է, մըռայլ, տըխուր և մըթին.
Անձրև է թափւում, քամին շառաչում-շառաչում.
Մըտքերըս կըպչում են իմ հէգ անցեալին,
Եւ թարմ՝ իմ յոյսերը փըշրւում են օդում,
Եւ օրերըս մըռայլ և մըթին։

—

Հանդարտ կաց, իմ սիրտ, և մի տըրտընջալ.
Դեռ ամպի յետև փայլում է արև.
Միակ չէ տըխուր և խեղճ քո բաժին.
Ամեն մէկի կեանքը տեսնում է անձրև
Եւ օրեր մըռայլ և մըթին։

Մոսկւա. 1889 Թ. 20 փեբրուարի

4/12